«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲԱՆԱԽՈՍ

1999 03 31 Թիվ 25

1999 03 25

ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆ
ՀՀ սոցիալական ապահովության նախարար

Բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրն այսօր պետության և հասարակության առջև ծառացած լրջագույն, թիվ մեկ հիմնահարցն է: Երբ 1998 թ. նշանակվեցի սոցիալական ապահովության նախարար, ինչպես ամեն նոր աշխատանք կատարող, առաջին հիմնական խնդիրը, որ դրեցի, ինչից սկսելն էր: Բնականաբար, երկար տարիներ աշխատելով փոխնախարար, որոշակի փորձառություն ունեի, բայց դառնալով նախարար, բոլոր հարցերի, որոշումների կայացման հիմնական պատասխանատուն, հարկ եղավ մեկ անգամ ևս կշռադատել, թե ինչից սկսել: Մենք փորձեցինք սկսել ամենատարրական, սկզբնային հասկացությունները մեզ համար պարզելուց. ի՞նչ է սոցիալական ապահովությունը:

ՀՀ սահմանադրության մեջ հռչակված է, որ Հայաստանը սոցիալական երկիր է: Եթե հարցնենք, յուրաքանչյուրս յուրովի կմեկնաբանի այդ «սոցիալական» հասկացությունը, իսկ «սոցիալական ապահովությունն»՝ առավել ևս: Նախ, մենք փորձեցինք տալ այդ հասկացության մեկնաբանությունը, որը ելակետ կլիներ մեր բոլոր քաղաքական որոշումների մշակման և կայացման համար:

Ի՞նչ է սոցիալական ապահովությունը: Յուրաքանչյուր անձի կյանքում կարող է լինել այնպիսի իրավիճակներում հայտնվելու վտանգ, որոնց առաջացման դեպքում խաթարվում են տվյալ անձի ձևավորված և իր համար ընդունելի համարվող կենսագոյության ձևն ու պայմանները: Նման իրավիճակներում, սոցիալական ուղղվածություն ունեցող երկրներում հասարակություններն ունեն կոնկրետ սոցիալ-էթիկական պարտավորություններ՝ այդպիսի իրավիճակներում հայտնված անձանց սոցիալական աջակցություն ցուցաբերելու: Որպես կանոն, այդ պարտավորություններն ամրագրվում են քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի սահմանադրական նորմով: Վերջինիս իրացման հիմնական նպատակը սոցիալական դժվար կացության մեջ հայտնված անձանց աջակցություն ցուցաբերելն է կամ օգնության ճանապարհով նման վիճակի առաջացման կանխարգելումը: Սոցիալական ապահովության այս սահմանումը տալուց հետո, հարցն այն է, թե ինչպիսի եղանակներով այն կարելի է իրականացնել:

Սոցիալական ապահովության տարբեր մոտեցումների, եղանակների բոլոր համախմբերը դիտարկել ենք երկու հիմնական խմբերի մեջ: Առաջինն՝ ապահովագրության հիման վրա սոցապահովություն և սոցիալական աջակցությամբ իրականացվող սոցիալական ապահովություն: Սրանք բառախաղեր չեն, այլ մեկը մյուսից ունի իմաստային տարբերություններ: Հանդես գալու մեծ հավանականություն ունեցող սոցիալական կացություններից սոցիալական պաշտպանությունը, որպես կանոն, իրականացվում է ապահովագրության միջոցով: Սոցապահովագրությունը կարող է կիրառվել երկու սկզբունքով՝ կամավոր և պարտադիր: Եթե մեծ հավանականությամբ կարող է հանդես գալ ոչ միայն սոցիալական ռիսկը, այլ դրան իր կյանքի բնականոն զարգացման ընթացքում կարող է ենթարկվել հասարակության յուրաքանչյուր անդամ, ապա ապահովագրությունը կրում է պարտադիր բնույթ:

Այսպիսով, շատ կարևոր ուղղություն է սոցիալական ապահովագրության հիման վրա ապահովության իրացումը: Մեր աշխատանքներում որպես առաջնային ուղղություն ընդունելով այդ թեզը, այժմ ձեռնամուխ ենք եղել պարտադիր սոցիալական համակարգի ստեղծմանն ու ներդրմանը: Ո՞ր սոցիալական ռիսկի դեպքերից ապահովագրությունը պետք է դիտել որպես պարտադիր: Այս խնդրի որոշման համար քննության ենք առել և միջազգային փորձը, և մեր յուրահատկությունները: Առաջարկվել է պարտադիր ապահովագրություն ծերությունից, երբ մարդն իր տարիքի պատճառով կորցնում է աշխատունակությունը, եկամուտը, ուստի վերջինիս փոխհատուցման երաշխավորված համակարգ պետք է լինի: Ճիշտ է, ծերությունը ռիսկ չի համարվում, բայց դրա հետևանքով եկամուտի կորուստը դիտվում է որպես սոցիալական ռիսկ: Հաջորդը՝ հաշմանդամությունն է, երբ հաշմվելու հետևանքով մարդը մասնակիորեն կամ լրիվ անվերադարձ կորցնում է իր աշխատունակությունը, որի հետևանքով նաև եկամուտը: Այս դեպքում ևս պարտադիր սոցապահովագրությունը նպատակ ունի փոխհատուցելու այդ կորցված եկամուտը: Մյուս իրավիճակը կերակրողին կորցնելն է: Այնուհետև՝ ժամանակավոր անաշխատունակության դեպքերը, երբ մարդը հիվանդության, ինչպես նաև՝ հղիության, պատճառով կորցնում է աշխատելու ունակությունն ու եկամուտը: Հաջորդն՝ արտադրությունում դժբախտ դեպքերից և գործազրկությունից պարտադիր ապահովագրությունն է:

«Արտոնություններն անհարիր են ապահովագրության համակարգին»

Ո՞վքեր են ենթակա պարտադիր սոցիալական ապահովագրության: Այն անձիք, ովքեր քաղաքացիա-իրավական կամ աշխատանքային պայմանագրերով աշխատանքային գործունեություն են իրականացնում և ունեն որոշակի եկամուտ ու աշխատավարձ: Եթե ծագի սոցիալական ռիսկի դեպք, որի հետևանքով առաջանում է եկամուտի կորուստ, ապա այն պարտադիր կփոխհատուցվի ապահովագրության ճանապարհով: Այսինքն, կիրականացվի սոցիալական ապահովություն:

Նշված համակարգի ներդրման համար արդեն իսկ մշակված և կառավարության կողմից հավանության է արժանացել պարտադիր սոցիալական ապահովագրության օրենքի նախագիծը, որն ուղարկված է Ազգային ժողովի քննարկմանը: Մենք այն համարում ենք հիմնարար, նույնիսկ՝ սահմանադրական օրենք՝ սոցիալական ապահովագրության համակարգի ներդրման առումով:

Նշված դեպքերից ի՞նչ տեսակներով պետք է իրականացվեն ապահովագրությունները. նախ՝ կենսաապահովագրության տեսակով, որն իր մեջ կընդգրկի ծերությունը, հաշմանդամությունը, կերակրողին կորցնելը: Մյուս տեսակները գործազրկության դեպքերից, ժամանակավոր անաշխատունակության, արտադրության դժբախտ դեպքերի, հիվանդության ապահովագրությունն է: Վերջինս առողջանալու համար կատարվող միջոցառումների ծախսերի կատարման համակարգն է: Ընդունելով պարտադիր սոցիալական ապահովագրության մասին օրենքն, այս տեսակներից յուրաքանչյուրի համար կմշակվեն համապատասխան օրենքներ:

Մանրամասնենք կենսաթոշակային ապահովագրության համակարգը: Ընդհանրապես, ապահովագրությունը գործում է այսօր վճարեցիր վաղը ռիսկի ի հայտ գալով կփոխհատուցվես սկզբունքով՝ ելնելով քո վճարածի չափից և տևողությունից: Կենսաթոշակային ապահովագրությունը մենք իրականացնելու ենք ճիշտ նույն սկզբունքով: Ողջ կենսաթոշակային համակարգն այս սկզբունքով իրականացնելը լինելու է երկարատև գործընթաց: Նախատեսել ենք երեք փուլ, ընդհանուր գործընթացը կավարտվի 2020 թվականին: Այսինքն, մի ամբողջ սերնդափոխություն պետք է տեղի ունենա: Առաջին փուլը նախատեսվում է ավարտել մինչև 2002 թվականը: Այդ ընթացքում պետք է փորձենք եղած համակարգը տեղափոխել ապահովագրության ռելսերի վրա, այսօրվա համակարգից թեթևացնելով այն խմբերը, որոնք կենսաթոշակ են ստանում ոչ ապահովագրության սկզբունքի հիման վրա: Այսօր կան սոցիալական խմբեր, որոնք կյանքում չեն աշխատել, բայց ստանում են կենսաթոշակ, կան խմբեր, որոնք արտոնություններով են օժտված: Արտոնություններն անհարիր են ապահովագրության համակարգին: Արտոնությունները կարող են լինել դրանք սահմանող մարմնի միջոցների հաշվին, այն չի կարող լինել ընդհանուր ապահովագրության սխեմայի մեջ: Մինչդեռ, այսօրվա կենսաթոշակային համակարգը լեցուն է արտոնությունների զանազան տեսակներով: Առաջին փուլում այս բոլորից թեթևացնելու ենք գործող համակարգը, որպեսզի համապատասխանեցվի ապահովագրական բնույթին: Մասնավորապես, պետք է հանենք սոցիալական, տարիքային սոցիալական, հաշմանդամության, կերակրողին կորցրածների կենսաթոշակները, որոնց դեպքում թոշակներ են ստանում մարդիկ, որոնք աշխատանքային ստաժ չունեն կամ, այլ կերպ ասած, ապահովագրական մուծումներ չեն կատարել: Երկրորդ մեծ խնդիրն այն է, որ պետք է ճշգրտենք մոտեցումն արտոնյալ կենսաթոշակների նկատմամբ. արդյոք այդ հասկացությունը պահպանվում է, եթե այո, ապա պետությունն ինչ-որ չափով պետք է փոխհատուցի: Չէ՞ որ մեկի ապահովագրական մուծանքի հաշվին, մեկ ուրիշը հետագայում ինչ-ինչ արտոնյալ պայմաններով փոխհատուցում է ստանում:

Լուծելիք երրորդ կարևոր խնդիրը քաղաքացիների անհատական հաշվառման համակարգի ստեղծումն է: Այս դեպքում միայն կարող է ապահովագրությունը կիրառվել որպես պարտադիր արժեք: Յուրաքանչյուր անձ պետք է տարբերակվի, երևա՝ իր անհատական հաշվով, որի վրա կկու-

Գագիկ Եգանյանը ծնվել է 1956թ. հունիսի 2-ին, Հադրութում: 1972թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական թեքումով միջնակարգ դպրոցը և ընդունվել համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Եղել է անվանական թոշակառու: 1977թ. ավարտելով համալսարանը՝ ընդունվել է Երևանի ժողտնտեսության ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտել է 1980թ.:

1981թ. Նովոսիբիրսկում պաշտպանել է գիտական թեզ՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Հեղինակել է մեկ մենագրություն և տասնյակից ավելի գիտական հոդվածներ:

1981-83թթ. գիտաշխատող է եղել Երևանի ժողտնտեսության ինստիտուտում: 1983-85թթ. աշխատել է իբրև ՀԽՍՀ նախարարների խորհրդի բնապահպանության հանձնաժողովի ավագ ռեֆերենտ, իսկ 1986-1990 թթ.՝ ֆինանսա-տնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ: 1990թ. հուլիսից աշխատում է ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում, նախ՝ իբրև նախարարի տեղակալ, այնուհետև՝ առաջին տեղակալ: 1998թ. ապրիլին նշանակվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարար:

Ամուսնացած է, ունի երկու տղա:

տակվեն տվյալ անձի ապահովագրական վճարները: Անհատական հաշվառման համակարգի ներդրումը ինքնին լինելու է մի խոշոր ծրագիր, որը, գուցե, մենք արդեն պետք է արած լինեինք: Այն պարտադիր պայման է ապահովագրական ճիշտ համակարգ ունենալու համար: Այս կապակցությամբ մենք, Ե-վրահամայնքի ՏԱՍԻՍ ծրագրի հետ միասին այսօր իսկ մշակում ենք այդ համակարգի ներդրման ծրագիրը: Այն պատրաստ կլինի հունիսին, իսկ հուլիսից կսկսվի ներդրման փուլը, որն առնվազն կտևի 2-2,5 տարի: Դրա արդյունքում բոլոր աշխատող, եկամուտ ունեցող քաղաքացիները կունենան իրենց անհատական հաշվառման համարները: Սա նաև միջոց կլինի պայքարելու ստվերային տնտեսության դեմ, քանի որ այն մարդը, որը չի ունենա իր անհատական հաշվառման համարը, նա համակարգից չի կարող օգտվել: Եկամուտ ունեցողը շահագրգռված կլինի հայտարարելու իր եկամուտների մասին ու դրա մի մասն անհատական հաշվին փոխանցելու, որպեսզի հետագայում ապահովագրված լինի սոցիալական ռիսկից:

> «Բոլոր աշխատող, եկամուտ ունեցող քաղաքացիները կունենան իրենց անհատական հաշվառման համարները»

2002-2008թթ. այն ժամանակահատվածը կլինի, երբ անհատական հաշիվների վրա արդեն կուտակումներ կլինեն, սակայն առաջին վեց տարիներին այն չի ազդի կենսաթոշակի ընդհանուր չափի վրա: Հասկանալի է, որ պետք է ներքին սահմանից բարձր տարիներ լինեն, որպեսզի դրանց հիման վրա հնարավոր լինի կենսաթոշակը որոշել: 2008 թվականից մինչև 2020 թ. այդ բաղադրիչն արդեն կարող է կենսաթոշակի չափի վրա ազդել, իսկ դրանից հետո արդեն լիարժեք կաշխատի: Հասկանալի է, որ սա թե ծավալային, թե ժամկետային ինչպիսի մեծ խնդիր է, բայց ամենը ծրագրված է ու դրա վերաբերյալ արդեն իսկ մշակված է կենսաթոշակային ապահովության համակարգի ռազմավարությունը, համապատասխան փաստաթղթերը գտնվում են կառավարությունում: Այն, ինչ ներկայացնում եմ, սոսկ տեսական դատողություններ չեն, ամենը համապատասխան փաստաթղթերով ներկայացված է համապատասխան մարմիններին:

Պարտադիր կենսաթոշակային ապահովագրության ներդրմանը զուգահեռ, առաջին փուլի ավարտից հետո կներդրվի կամավոր կենսաթոշակային ապահովագրությունը: Վերջինս նաև իր խրախուսիչ դերը կունենա արժեթղթերի երկրորդային շուկայի կայացման և զարգացման հարցում: Բացի դրանից, կենսաթոշակային ապահովության երրորդ սյունը կլինի առանձին կատեգորիաների քաղաքացիների համար կենսաթոշակային ապահովությունը, որոնց համար ապահովագրողի դերը կկատարի պետությունը: Սա ևս կներդրվի երկրորդ փուլի ընթացքում: Չեմ մանրամասնում ապահովագրության մյուս տեսակները, բայց հիշենք, որ այսօր իսկ աշխատանքներ են տարվում, օրենսդրական հիմքեր են ստեղծվում սոցիալական ապահովագրական համակարգի ներդրման համար:

Ինչպես նշեցի, սոցիալական ապահովության իրականացման երկրորդ ուղղությունը սոցիալական աջակցության եղանակն է: Եթե ապահովագրության ժամանակ որպես սոցիալական ապահովության միջոցներ օգտագործվում են ապահովագրողի միջոցներն, ապա սոցիալական աջակցության համար միջոցների աղբյուրը պետական բյուջեն է: Սա նախատեսված է այն մարդկանց համար, ովքեր չեն կարող ընդգրկվել ապահովագրական համակարգի մեջ՝ երբեք չեն կարողացել աշխատել: Պետությունը չի կարող նրանց սոցիալական հարցերից անմասն մնալ: Պետական աջակցության ծրագրերում կարող են ընդգրկվել նաև նրանք, ովքեր ապահովագրված են, բայց ցածր կենսաապահովում ունեն: Ահա թե ինչու պետական բյուջեից իրականացվող սոցիալական աջակցությունը սոցիալական ապահովության երկրորդ հիմնական ուղղությունը պետք է լինի: Այն տարիներ շարունակ եղել է նախկին համակարգում և այսօր էլ կա: Այստեղ խնդիրն այն է, թե ինչպես ձևակերպել, ինչպես կատարել միջոցների բաշխումը: Նշենք, որ պետական սոցիալական աջակցությունը կարելի է իրականացնել երկու ձևով: Մեկը՝ դրամական փոխանցումների միջոցով՝ այս կամ այն խմբին, քաղաքացուն տալով դրամական միջոցներ, մյուսը՝ ծառայությունների տրամադրման միջոցով: Դրամական փոխանցումների եղանակում կա երկու մոտեցում: Մեկը՝ պետության բյուջետային հնարավորություններից և խնդիրների գերակայություններից ելնելով ամեն տարի որոշակի միջոցների տրամադրումն է սոցիալական աջակցության համար: Ինչպե՞ս բաշխել այդ գումարը, ու՞մ: Այստեղ մենք խնդիրը ձևակերպել ենք հետևյալ կերպ. միջոցների բաշխման հիմքում դիտել կարիքավոր ընտանիքը: Հնչեղության առումով շատ ականջալուր է, բայց իրականացման առումով՝ դժվար: Հարց է ծագում. իսկ ո՞վ է աղքատը, ինչպե՞ս, ի՞նչ չափանիշներով որոշել նրան: Մինչ այժմ, պետական սոցիալական աջակցությունը հիմնված է եղել ըստ սոցիալական խմբերի բաշխման սկզբունքի վրա՝ հաշվի առնելով, որ սոցիալական որոշակի ռիսկի խումբը ինքնին նշանակում է աշխատունակության կորուստ, որոշակի սոցիալական ծանր իրավիճակ: Դա էլ արդարացված է եղել: Առանձնացվել են 10-12 սոցիալական տարբեր խմբեր՝ բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամներ և այլն: Եթե ընտանիքում եղել է տվյալ խմբին պատկանող անդամ, ապա նրան տրվել է պետության կողմից սահմանված չափաբաժինը: Սակայն այն ընտանիքի համար, որը կարիքավոր է, բայց չունի սոցիալական որևէ ռիսկի խմբին պատկանող անդամ, համակարգը փակ է: Այս խնդրին լուծում տալու համար մենք խմբային բաշխումից, երբ անհատը դիտարկվում էր իր սոցիալական պատկանելիությամբ, անցնում ենք ընտանիքի կարիքավորության հիմքին: Սա սոցիալական աջակցության քաղաքականության մեջ արմատական փոփոխություն է, ինչը նշանակում է հասցեականության և սոցիալական արդարության սկզբունքի ներդրում: Հասցեականություն, որովհետև աջակցությունն ուղղված է սոցիալապես անապահովին, և արդարություն, որովհետև սահմանափակ միջոցները հասցեագրվում է հենց աղքատին:

Ինչպե՞ս լուծենք աղքատության որոշման խնդիրը: Կա երկու հնարավոր եղանակ: Առաջինը՝ ուղղակի եղանակը, հիմնված է եկամուտների վրա : Սակայն, ստվերային մեծ ծավալի տնտեսության պայմաններում, եկամուտների հայտարարագրման համակարգի բացակայության պայմաններում դա անհնար է կիրառել: Ուստի աղքատության իրական աստիճանը որոշելու համար պետք է առաջնորդվել մեկ այլ՝ անուղղակի ճանապարհով: Այս դեպքում կարիքավորության աստիճանի որոշումը կապվում է այլ չափանիշների, բաղադրիչների, ոչ եկամտային գործոնների, արժեքների հետ: Այդ գործոնների ընտրման հիմքում ընկած է հետևյալ սկզբունքը. նախ՝ դրանք պոտենցյալ ձևով պետք է ներկայացնեն որոշակի կարիքավորություն և, ապա, լինեն չափելի, դրանց վերաբերյալ պետք է հնարավոր լինի տեղեկություն ստանալ: Այդպիսի սկզբունքների հիման վրա մշակվել է մի համակարգ, որն անուղղակի ճանապարհով որոշում է կարիքավորությունը. դա քաջածանոթ «Փարոս» համակարգն է: Հարցին նման մոտեցման դեպքում միշտ պետք է հիշել, որ կարիքավորության որոշումը ճշգրիտ գիտություն չէ: Մենք միայն կարող ենք խոսել համակարգի տրամաբանվածության մասին, որ այնտեղ տրամաբանական ճիշտ չափանիշներ են ներդրված: Այն միշտ կատարելագործվում է՝ նվազեցնելով ընդգրկման սխալը, փորձելով համակարգից հանել հարուստներին, ընդգրկելով այն աղքատներին, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ներգրավվել: Նման համակարգ մշակված է 1994թ. ի վեր, որտեղ սկզբնական փուլում հաշվառված էր հանրապետու-

թյան 700000 ընտանիք: Վերահաշվառումից հետո այժմ դրանց թիվը կազմում է 550000: Որոշակի գործոններից, չափանիշներից ելնելով յուրաքանչյուր ընտանիք ունի իր միավորը, որը ցույց է տալիս նրա հարաբերական կարիքավորությունը: Այն հիմք է հանդիսացել մեր պետական սոցիալական աջակցության նպատակային քաղաքականության իրականացման համար՝ ընտանեկան նպաստի տեսքով: 230000 ընտանիքն ընտրված է այդ ցուցակից: Ինչու՞ հենց այս թիվը: Իսկ Հայաստանում ինչքա՞ն են, ընդհանրապես, աղքատության ծավալները: Այս հռետորական հարցն անմիջապես հարց է առաջացնում. իսկ ի՞նչ տեղեկությամբ այն կարող ենք կշռել, որոշել: Պետական ոչ մի վիճակագրական հաշվետվություն չի կարող լինել: Միայն սոցիոլոգիական հարցումները կարող են մեզ հուշել այդ չափերի մասին: Ընտանիքների 230000 թիվը հենց արդյունք է վիճնախարարության կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների: Դրանցից պարզվել է, որ այդ ընտրանքում ընդգրկված ընտանիքների 27%-ը խիստ աղքատներն են: Այսինքն, ընտանեկան նպաստի համակարգը ծայրահեղ աղքատների համար նախատեսված համակարգ է: Նպաստի չափը իմաստային առումով իր մեջ որևիցէ խնդրի լուծում չի նախատեսում: Հաճախ են հարցնում, թե արդյոք դրանով կարելի է ընտանիքի այս-կամ այն խնդիրը լուծել, ընդհուպ՝ կապելով նվազագույն սպառողական զամբյուղի հետ: Ոչ, նման խնդիր չկա դրված: Ավելի շատ այդ չափը պայմանավորված է պետական բյուջեի հնարավորություններով:

«Այսօրվա կենսաթոշակային համակարգը փակուղային իրավիճակում է»

Համակարգը ներդրված է: Դրա համար կատարվել է մեծ ծավալի աշխատանք, ստեղծվել են համապատասխան օրենսդրական հիմքերը: Մշակված է նաև պետական նպաստների մասին օրենքի նախագիծ: Պետական նպաստի օրենքով նաև կամուրջ կստեղծվի պետական ապահովագրության և սոցիալական աջակցության միջև:

Ներկայացնենք ծառայությունների տեսքով տրվող սոցիալական աջակցությունները: Դրանցից կարևորվում են հաշմանդամներն ու փախստականները՝ որպես սոցիալական ռիսկի խմբեր: Եթե միայն թվարկենք այն խմբերը, որոնց հետ գործի բերումով առնչվում է սոցապ նախարարությունը, պարզ կդառնա այն ծանրաբեռնվածությունը, աշխատանքի ծավալը, որը տանում է այս կառույցը: Միայն հաշմանդամների թիվը հանրապետությունում հասնում է 108000-ի:

Մինչ այժմ հաշմանդամության ճանաչման հիմքում դրված էր անձի աշխատունակության կորուստի հանգամանքը: Մի բան, որն արդարացված էր նախկին հասարակարգում, քանի որ համապարփակ պարտադիր նորմ էր բոլորի համար և ամենուրեք կար աշխատելու հնարավորություն, և որը, հասկանալի պատճառներով, կիրառելի չէ այսօրվա հանգամանքներում: Գաղափարախոսական առումով ինչպե՞ս մոտենալ հաշմանդամության սահմանմանը, ու՞մ համարել հաշմանդամ: Այս խնդիրը փորձեցինք լուծել նորովի՝ հաշմանդամությունը դիտելով որպես ֆունկցիա անձի և հասարակության հարաբերություններից: Եթե դրանք նորմալ են, ապա հաշմանդամության նշույլ չկա, եթե հարաբերությունները խաթարված են, կան որոշակի, ասենք՝ կողմնորոշվելու, շարժվելու, լսելու, սովորելու և այլ հարաբերությունների սահմանափակումներ, ուրեմն կարող է խոսք լինել հաշմանդամության մասին: Հաշմանդամության ճանաչման խնդիրը մենք ամբողջությամբ այլ սոցիալական հարթության վրա տեղափոխեցինք և դրան համապատասխան նոր ինստիտուտներ՝ բժշկասոցիալական հանձնաժողովներ, ձևավորեցինք: Սա ամբողջությամբ նորություն էր, որը գործի մեջ դրվեց այս տարվա հունվարի մեկից:

Հաշմանդամության խնդիրները միայն ճանաչումով չի սահմանափակվում: Այստեղ կա խնդիրների մեծ շարան, սկսած հաշմանդամության կանխարգելումից, վերջացած հաշմանդամության վերականգնումով: Այստեղ ևս պետք է կարողանանք լուծել պետական մոտեցման և երաշխիքների մակարդակի սահմանման խնդիրը: Ճանաչման խնդիրը յուրովի լուծելով, մշակում ենք հաշմանդամության կանխարգելման ծրագիրը, որն իր մեջ ընդգրկում է բազմաթիվ տեսանկյուններ, սկսած առողջ ապրելակերպից, վերջացրած՝ ճանապարհա-տրանսպորտային երթևեկության պատահարները կանխարգելող համալիր միջոցառումների իրականացումով: Սահմանվում է նաև հաշմանդամության հետ առնչվող վերջին փուլը՝ վերականգնումը, իր բոլոր տեսակներով՝ բուժական, աշխատանքային, հոգեբանական և սոցիալական: Այդ ծրագրերն առաջիկայում կքննարկվեն նախարարությունում և կներկայացվեն կառավարություն, դառնալով հաշմանդամության նկատմանբ պետության երաշխիքները: Հաջորդը՝ փախստականների և հարկադիր տեղահանվածների հարցն է: Այստեղ հաշվվում է մոտ 313000 հոգի: Խնդիրը ձևակերպվում է հետևյալ կերպ. այդ մարդկանց լիարժեք միաձուլում հասարակությանը: Փախստականների համար առաջին հերթին հառնում է հետևյալ խնդիրների լուծումը. առաջինը՝ ծածկի ապահովում, այնուհետև՝ աշխատանքով, մասնագիտությամբ բավարարում: Հանրապետությունում 14000 ընտանիք արդեն տասը տարի է, ինչ անօթևան են: Ծածկի խնդիրն, ինքնին հասկանալի, կարևոր հարց է: Դա լուծվում է երկու ճանապարհով՝ միջազգային հանրության, մասնավորապես՝ ՄԱԿ-ի խողովակներով, ինչպես նաև կառավարության միջոցներով: Անցյալ տարի առաջին անգամ կառավարությունը որոշակի միջոցներ նախատեսեց փախստականների բնակարանների շինարարության համար, որն այս տարի նույնպես ամրագրված է պետական բյուջեում: Բայց սրանք փոքրածավալ միջոցներ են: Այս երկու ճանապարհով տարեկան լուծվում է մինչև 300 ընտանիքի խնդիր: Մենք ձեռնամուխ ենք եղել երկարատև բնակարանային ապահովման ծրագրի մշակմանը: Փորձել ենք խնդիրը դիտել ոչ թե 14000 փախստական ընտանիքի համար բնակարանների կառուցմամբ, այլ դա կոնկրետության մեջ տեսնել: Այդ ծրագիրը հիմնված է մի քանի սկզբունքների վրա. տրվող բնակատեղիները չպետք է լինեն քոթեջային ավաններ, քանի որ դրանք հեռու են ինֆրաստրուկտուրայից և սակավահող Հայաստանի համար արդարացված չեն: Փոխարենն առաջարկվում է հարցը լուծել բազմաբնակարանանոց անավարտ շենքերի ավարտման միջոցով: Մեկ այլ սկզբունքով, փախստականը բնակարանով պետք է բավարարվի այն տարածքում, որտեղ այժմ ապրում է. պետք չէ, որ այդ մարդիկ կրկին տեղահան լինեն՝ այս անգամ Հայաստանի տարածքում: Ծրագիրն իր մեջ պարունակում է մի կողմից 14000-ի պահանջարկ, մյուս կողմից՝ 14000-ի առաջարկ: Դրանում հստակ երևում է, որ, ասենք, «Լուսատեխնիկական» գործարանի հանրակացարանում բնակվող փախստական 50 ընտանիքը պետք է ապահովվի Աշտարակի այսինչ փողոցի այսինչ 40 բնակարանանոց շենքի շահագործման միջոցով: Այսպիսի կոնկրետության դեպքում կարելի է նաև փախստականների համբերությունն ու վստահությունը շահել:

Փախստականների համար առաջնային հարց է նաև զբաղվածության խնդիրը: Բայց այն սուր է դրված նաև տեղաբնակների համար, ուստի այստեղ առանձնակի տարբերություն չի դրվում մեր քաղաքականության մեջ: Նրանք այնքանով են պաշտպանված գործազրկությունից, որքան մեր այսօրվա գործող օրենսդրությունն է թույլ տալիս:

Փախստականների իրավաբանական պաշտպանվածության հարցին անդրադառնալով նշենք, որ վերջերս ընդունվեց համապատասխան օրենքը, որը սահմանեց դրանց իրավական կարգավորման եղանակները: Սա բավականին առաջընթաց քայլ էր: Այն միջազգային հանրությանը ստիպում է ավելի տրամադրվել Հայաստանին, քանի որ այստեղ

մեր հանրապետությունը լուրջ նախաձեռնություններ է հանդես բերում:

Նախարարության գործունեության հիմնական ոլորտներից են կանանց, մայրության, երեխաների հիմնախնդիրները: Երեխաների առումով միայն նշեմ երկու հիմնախնդիր՝ փողոցային երեխաներ և որդեգրում: Շատ նուրբ և բոլորին հուզող հարցեր են: Ինչպե՞ս մոտենալ փողոցային երեխաների խնդրի լուծմանը: Հասկանալի է, որ խնդիրը վարչական եղանակով լուծելի չէ. դա միայն սահմանափակ տարածքներում և ժամանակաշրջանում կարող է արդյունք տալ: Պարզ է, որ պատճառը տնտեսական-սոցիալականն է, և նման կացությամբ ընտանիքների վիճակը վաղը-մյուս օրը չպետք է լավանա: Եթե մենք փորձենք այդ ընտանիքների վրա շեշտը դնելով լավացնենք դրանց սոցիալական վիճակը, ապա վաղը փողոցում կհայտնվի հարևան ընտանիքի երեխան: Ուստի դա արդյունավետ ճանապարհ չէ: Երրորդը՝ այդ երեխաների համար լուծում չի կարող լինել նաև մանկատունը. սոցիալական մեկուսացումը հասարակության ապագա սերնդի համար ճիշտ եղանակ չէ: Հիմնական ճանապարհը մեկն է՝ այդ երեխաներին վերադարձնել ընտանիք: Ինչպե՞ս: Հայեցակարգային մոտեցմամբ փորձ է արվելու հարցը կարգավորել առանձին կառույցի միջոցով, որը կոչել ենք երեխաների օգնության կենտրոն: Հայտնաբերված յուրաքանչյուր այդպիսի երեխայի համար ուսումնասիրվում են այն պայմանները, որոնք նրան բերել են փողոց, պարզվում նրա ընտանիքի սոցիալ-հոգեբանական վիճակը և ամենօրյա, հետևողական, տքնաջան աշխատանքի միջոցով փորձ է արվում վերականգնել երեխա-ընտանիք բնականոն կապը: Հարյուրից երևի թե 20-30 դեպքում հաջողության կարելի է հասնել: Կապը չվերականգնելու դեպքում, պետք է փորձել հարազատների ընտանիքների հետ աշխատել: Այս դեպքում էլ հաջողության չհասնելու դեպքում, պետք է գտնել խնամատար ընտանիքներ: Միայն որպես վերջին տարբերակ պետք է ընտրվի մանկատունը: Սա է խնդրի լուծման ճանապարհը, որի վերաբերյալ փաստաթղթերը նույնպես համապատասխան հիմնավորումներով ներկայացված է կառավարության քննարկմանը:

Ինչպե՞ս կարելի է լուծել որդեգրման, այդ թվում՝ միջազգային որդեգրման խնդիրը: Ճանապարհն, ըստ մեզ, այդ ողջ գործընթացի թափանցիկության ապահովումն է: Ինչպե՞ս: Առաջարկվում է ստեղծել որդեգրման ենթակա երեխաների տվյալների շտեմարան: Նախատեսվում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները յուրաքանչյուր որդեգրման ենթակա երեխայի տվյալները պետք է ներկայացնեն համապատասխան մարմնին՝ նախարարությանը: Մյուս կողմից ստեղծվում է որդեգրելու պատրաստ ընտանիքների տվյալների շտեմարան, նախօրոք ուսումնասիրելով, թե որքանո՞վ են պատրաստ, ունակ այդ ընտանիքները պաշտպանելու երեխայի իրավունքները: Այդ ամենից հետո հնարավորություն է ստեղծվում երկու կողմերին առանց խոչընդոտների հանդիպելու համար: Մշակված է նաև այս հայեցակարգային դրույթի ինստիտուցիոնալ մասը, որը նույնպես ներկայացված է կառավարություն: Ըստ իս, այդ ճանապարհով մենք կարող ենք ապահովել ճիշտ, հրապարակային, թափանցիկ որդեգրման ընթացակարգ: Ըստ դրա, նախ և առաջ, հնարավորություն պետք է տրվի երեխային որդեգրել Հայաստանում: Միայն տարբերակների բացակայության պայմաններում երեխան որդեգրման պետք է առաջարկվի արտասահմանցի քաղաքացիներին:

Սոցապնախարարությունը հիմնականում պատասխանատվություն կրելով սոցիալական ապահովության քաղաքականության մշակման հարցերում, դրանք իրականացնում է նախարարության համակարգի մեջ չմտնող մարմինների միջոցով: Մասնավորապես, կենսաթոշակային ապահովությունն իրականացվում է սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի առանձին կառույցների կողմից: Սոցիալական աջակցության քաղաքականությունն իրականացնում են մարզպետարանների ենթակայությամբ գործող սոցիալական ծառայությունները: Ցավոք սրտի, այստեղ, երբեմն, որոշակի շահերի բախում է լինում: Իսկ առանձին խմբերով՝ փախստականներ, հաշմանդամներ և այլն, զբաղվող մարմիններ կան և մեր, և առողջապահության նախարարության համակարգում:

Պետք է ընդգծել, որ սոցիալական ապահովության նախարարությունը սոցիալական նպատակների համար միջոցներ չի ստեղծում և ոչ էլ ավելացնում է ստեղծված միջոցները: Այն, որ կենսաթոշակները ցածր են, պայմանավորված չէ միայն սոցիալական ապահովության նախարարության աշխատանքով. երևի թե լուծումը այլ հարթության մեջ պետք է փնտրել:

Այն թեզերը, որոնք ներկայացվեցին, «պետք է, պետք է ...»-ի հիմքի վրա չէ, որ կառուցվել են. դրանք իրականացվում են կյանքում: Երբ մեր նախարարությունը քաղաքականություն է մշակում, դրանք ապահովում է համապատասխան փաստաթղթերով, որոնց մի մասն ընդունված է, մյուս մասը՝ քննարկման մեջ է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Ինչու՞ չեք հրապարակում տվյալներ, թե որքան թոշակառու կա Հայաստանում, որքա՞ն գումար է հավաքվում հիմնարկ-ձեռնարկություններից և այդ գումարներն ինչքանո՞վ են բավարարում կենսաթոշակների վճարման համար:

-Ցանկացած քիչ թե շատ այդ հարցի հետ առնչվող հրապարակման մեջ այդ թիվը նշվում է. այսօր Հայաստանում կա շուրջ 580000 կենսաթոշակառու: Միջին կենսաթոշակի չափը մոտ 7 ամերիկյան դոլարին համարժեք գումար է՝ 3700 դրամ: Անմիջապես հարցնում են. իսկ ի՞նչ կարելի է դրանով անել: Յուրաքանչյուրը կարող է պատասխանի իր տարբերակն ունենալ, սակայն, ընդհանուր առմամբ գրեթե ոչինչ հնարավոր չէ անել:

Այսօրվա կենսաթոշակային համակարգը փակուղային իրավիճակում է գտնվում: Սա այն պատճառով, որ մուծումներ կատարողների թիվը, որոնց միջոցներից կենսաթոշակներն են ստեղծվում, 540000 է: Սրանք համակարգին արդյունավետ վճարումներ կատարողներն են: Եվ սա այն դեպքում, երբ համակարգից օգտվողների թվում միայն կենսաթոշակառուները կազմում են 580000: Այսպես համակարգը չի կարող գոյատևել, սա փակուղային վիճակ է: Վարչարարությամբ 540000-ը չի կարելի դարձնել 900000 կամ մեկ միլիոն: Վարչարարության խստացումը ժամանակավոր արդյունք կտա, որովհետև միևնույն է, ինչքան էլ կադրային փոփոխություններ անես, չվճարողը դարձյալ չի վճարելու: Այդ իսկ պատճառով է, որ անցնելու ենք պարտադրված անհատական հաշվառման համակարգին: Սա թույլ կտա պարզելու, թե ով է ընդգրկված համակարգում, յուրաքանչյուրն ինքը շահագրգռված կլինի: Միայն այդպես հնարավոր կլինի դուրս գալ ստեղծված կացությունից:

-Ձեր նախարարությունը ինչպիսի՞ ռազմավարություն ունի զբաղվածության հիմնահարցի առնչությամբ:

-Նախ, փորձենք հասկանալ, թե ի՞նչ է զբաղվածության պետական ծառայությունը, որտեղից էլ կածանցվի, թե

ինչպիսի քաղաքականություն պետք է իրականացնենք: Աշխատաշուկայում առկա են մի կողմից գործազուրկներ, աշխատանք փնտրողներ, մյուս կողմից պահանջարկ, ազատ աշխատատեղեր: Զբաղվածության պետական ծառայությունը միջնորդ է առաջարկի և պահանջարկի այդ հարաբերությունների մեջ: Ծառայությունն առաջարկ չի կարող ստեղծել, այլ կարող է օգնել, որ եղած առաջարկը համապատասխանեցվի պահանջարկին: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը հասնում է 160000-ի, առաջարկը՝ գործատեղերի թիվը, չի անցնում հազարից: Այս պարագայում ինչպիսի քաղաքականություն էլ տանես, արդյունավետ չի կարող լինել, որովհետև չկա առաջարկ:

Այսուհանդերձ, ի՞նչ խնդիր կարող ենք լուծել վարվող քաղաքականությամբ: Պետք է փորձել գործազուրկին աշխատաշուկայում դարձնել ավելի մրցունակ, ավելի մեծ հնարավորություն տալ, որպեսզի կարողանա զբաղվածությամբ ապահովվել: Սա է ռազմավարական խնդիրը, որին հասնելու համար կան տարբեր միջոցներ ու եղանակներ, այդ թվում՝ որակավորման դասընթացների կազմակերպում, աշխատաշուկայում թույլ մրցունակ առանձին խմբերի զբաղվածությանն աջակցող ծրագրեր և այլն: Բացի այդ, անցյալ տարի մենք լայնորեն սկսեցինք կիրառել գործազուրկներին սեփական գործ հիմնելու համար դրամական աջակցություն ցուցաբերելու ուղղությունը, որը օրենքով նախատեսված էր, բայց մինչև անցյալ տարի չէր կիրառվել: 1998-ին մենք շուրջ հարյուր նման արդյունավետ ծրագիր իրականացրեցինք, կարողացանք վերամասնագիտացնել շուրջ 550 գործազուրկի: Ինչ խոսք, սա մեծ թիվ չէ, բայց ավելին է, քան 1994-97 թվականների ցուցանիշը միասին վերցրած: Այս տարի ակտիվ քաղաքականության տարրերի մեծացման այդ միտումը շարունակվելու է, համապատասխան միջոցներ են նախատեսված, որոնք կբերեն ներկայացված տվյալների թվական աճի:

- Սոցիալական աջակցության քաղաքականության մշակողը և դրա իրականացման պատասխանատուն Ձեր նախարարությունն է, սակայն սոցծառայությունների տարածքային կենտրոնները գտնվում են մարզպետարանների համակարգում: Ինչու՞ է այդպես և դա չի՞ խոչընդոտում նրանց աշխատանքի համակարգման ու վերահսկողության արդյունավետ իրականացմանը:

-Ինչ խոսք, խոչընդոտում է: Ավելին, եթե մենք ունենայինք մեզ բաժին հասած պատասխանատվությանը համապատասխան իրավասություններ, ապա սոցիալական աջակցության համակարգը կդառնար ամենահասցեական համակարգերից մեկը: Ինչո՞վ է սա հիմնավորված: Մենք մի ամբողջ քաղաքականություն ենք մշակել, որը նորություն է: Այն բացատրել ենք քաղաքականությունն իրականացնողներին՝ սոցիալական ծառայության աշխատակիցներին: Քաղաքականության ճիշտ իրականացումը նախատեսում է նաև պարբերական ստուգումներ, ուսումնասիրություններ, որոնց արդյունքում գնահատվում են, թե ովքեր են գիտակցաբար սխալներ կիրառում, ովքեր են ուզում ճիշտ կիրառել, բայց չեն կարողանում: Ամեն դեպքում այսպիսիները տեղ չունեն այս քաղաքականության մեջ: Հաճախ, երբ ստուգումների արդյունքում ահազանգում ենք այս կամ այն թերության առնչությամբ, պարզվում է, որ շատ ժամանակ տեղային և ընդհանուր գործի շահերը միշտ չէ, որ նույն կետի վրա են հատվում: Չի բացառվում, անգամ, որ վատ աշխատողը շարունակի մնալ իր տեղում: Նման դեպքերը բազմաթիվ են, ինչն, անշուշտ, բարդություններ է ստեղծում:

Մենք մտածում ենք, որ նոր համակարգի ներդրման պահին մեկ տարի ժամկետով ամբողջը վերաենթարկել նախարարությանը, որից հետո դարձյալ տալ այսօրվա կառույցներին:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ

«Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրները Հայաստանում»

ՀԱՀ հատուկ դասընթացների բաժինը սկսում է
«Գորդյան հանգույց»
խորագրով իր նոր ծրագիրը:
Ծրագրի շրջանակներում հանրությանը հուզող հրատապ թեմաների շուրջ պարբերաբար կկազմվեն կլոր սեղաններ, կմասնակցեն համապատասխան գերատեսչությունների, կազմակերպությունների ներկայացուցիչներ և մասնագետներ:

Անդրանիկ կլոր սեղանը նվիրված կլինի մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդրին: Կմասնակցեն՝
ՀՀ սոցիալական ապահովության նախարար Գագիկ Եգանյանը,
ՀՀ կրթության և գիտության նախարարության նախադպրոցական, արտադպրոցական և հատուկ վարչության պետ Ռոբերտ Ստեփանյանը,
ՀՀ ՆԳ և ԱԱՆ քրեական հետախուզության վարչության պետ, փոխգնդապետ Մարգար Մելքոնյանը:

Ապրիլի 8-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում (5-րդ հարկ)

Մուտքն ազատ է

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ



ՀՀ սեփականաշնորհման նախարար

Պավել Ղալթախչյանը

ներկայացնում է

«Սեփականաշնորհման գործընթացը Հայաստանում»

Ապրիլի 15-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում (5-րդ հարկ)

Մուտքն ազատ է

ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL://www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝